Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա-հատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա-հատման պահուստ	Կուտակ-ված վնաս	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	2,454,500	4,868	170,207	93,634	45,925	(1,142,659)	1,626,475
Տարվա վնաս	-	-	-	-	-	(98,416)	(98,416)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(1,560)	1,560	-
Իրական արժեքի փոփոխություններ	-	-	-	14,151	-	-	14,151
Վերադասակարգում շահույթին կամ վնասին	-	-	-	(21,401)	-	-	(21,401)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	1,305	-	-	1,305
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(5,945)	(1,560)	(96,856)	(104,361)
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,454,500	4,868	170,207	87,689	44,365	(1,239,515)	1,522,114

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2019թ.	2018թ.
Այլ վարչական ծախսեր	25	(885,276)	(909,371)
Այլ ակտիվների և դեբիտորական պարտքերի արժեզրկման (ծախս)/հակադարձում	26	(21,399)	1,134
Արտարժութային գործարքներից զուտ վնաս		(3,771)	(128)
Վնաս մինչև հարկումը		(70,017)	(118,836)
Շահութահարկի գծով ծախս	27	(28,399)	(7,524)
Տարվա վնաս		(98,416)	(126,360)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		-	1,120
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու շահույթում կամ վնասում		-	1,120
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ/(վնաս)		(7,250)	26,271
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		1,305	(2,970)
Զուտ օգուտ/(վնաս) հոդվածներից, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում		(5,945)	23,301
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		(5,945)	24,421
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(104,361)	(101,939)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից 76 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ.	2019թ.
Համախառն ապահովագրավճարներ	19	4,629,953	5,170,759
Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստում	19	187,175	(249,416)
Համախառն ապահովագրավճարների գծով հասույթ		4,817,128	4,921,343
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	19	(313,306)	(289,601)
Վերաապահովագրողների մասը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	19	(5,259)	20,896
Փոխանցված վաստակած ապահովագրավճարներ		(318,565)	(268,705)
Ապահովագրավճարների գծով զուտ հասույթ		4,498,563	4,652,638
Համախառն հատուցումներ	20	(3,298,735)	(3,588,517)
Համախառն հատուցումներում վերաապահովագրողների մասը	20	149,871	147,914
Զուտ հատուցումներ		(3,148,864)	(3,440,603)
Սուբրոգացիայի գծով եկամուտ		55,255	83,049
Ձեռքբերման ծախսեր	21	(449,524)	(423,843)
Վերաապահովագրության միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	22	41,691	23,562
Այլ ապահովագրական եկամուտ		17,228	11,865
Այլ ապահովագրական ծախս	23	(260,921)	(236,037)
Ապահովագրական գործունեության արդյունքներ		753,428	670,631
Զուտ ֆինանսական եկամուտ	24	230,162	173,404
Մաշվածություն և ամորտիզացիա	6	(143,161)	(54,506)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Պարտավորություններ			
Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ	14	1,924,761	2,006,729
Ապահովագրության և վերաապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	15	81,654	166,705
Հետաձգված հարկային պարտավորություն	27	19,614	-
Ստացված կանխավճարներ ապահովագրության գծով		150,412	72,635
Բանկերից ստացված վարկեր	16	352,064	50,145
Հետգնման պայմանագրեր բանկերի հետ	17	795,249	570,597
Այլ պարտավորություններ	18	240,236	67,926
Ընդամենը՝ պարտավորություններ		3,563,990	2,934,737
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		5,086,104	4,561,212

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. ապրիլի 23-ին

Արմինե Մելքոնյան
Գործադիր տնօրեն

Էիլիթ Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից 76 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի, 2020թ.	31 դեկտեմբերի, 2019թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	6	629,259	458,835
Այլ ակտիվներ	7	34,873	45,153
Հետաձգված հարկային ակտիվներ	27	-	7,480
Կանխավճարներ շահութահարկի գծով		82,400	82,400
Հետաձգված ծեռքբերման ծախսեր	8	190,301	250,954
Ապահովագրության և վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	9	309,782	501,582
Վերաապահովագրական ակտիվներ	14	240,915	195,519
Ներդրումային արժեթղթեր			
- Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	10	49,505	102,058
- Հետգնման պայմանագրերով գրավադրված վաճառքի համար մատչելի արժեթղթեր	10	844,100	626,475
Ավանդներ բանկերում	11	2,619,909	2,142,375
Դրամական միջոցներ	12	85,060	148,381
Ընդամենը՝ ակտիվներ		5,086,104	4,561,212
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	13	2,454,500	2,454,500
Լրացուցիչ կապիտալ		4,868	4,868
Այլ պահուստներ		302,261	309,766
Կուտակված վնաս		(1,239,515)	(1,142,659)
Ընդամենը՝ սեփական կապիտալ		1,522,114	1,626,475

գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Լիլիթ Բաղդասարյան
Աուդիտի ղեկավար

23 ապրիլի 2021թ.

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-Ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9

Հ. + 374 10 500 964
Ֆ.+ 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia

T + 374 10 500 964
F + 374 10 500 961

«Սիլ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սիլ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքների շեշտադրում

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 28-ի վրա, որը վերաբերում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջների խախտմանը:

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	12
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	14

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սիլ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2020թ.